

Արարաւ

ԻՐԱՆԻ ԶՅՈՒԱԳԻՐ

ՊԱՏՃԵՆ ՏԵՂԵԿԱԿՐԻՆ  
ՄԱՏՈՒՑՈՒԱԾ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ՎԵ ՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅՑ  
ԵՎ ԵՂԵՑԻՈՅՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ուսարր 8 Հոկտեմբեր 1920

Առ Ն. Ս. Օժոճիւն  
ՎԵ ՀԱՓԱՌ Հայրապետն Ամենայն Հայոց,  
Տ. Տ. ԳԵՈՐԳ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
Ի Ս. ԷՋՄԻԱՄԻՆ.

Որդիական ակնածանօք Տեղեկագրութիւն:

ՎԵ ՀԱՓԱՌ ՏԵՐ,

Ամերիկայի Հայոց Եկեղեցւոյն եւ Առաջնորդութեան շուրջ այլընդայլոյ տեղեկութիւններ հասած են ի Մայր Աթոռ, ինչպէս որ հասկըցուցաւ Ձեր Ս. Օժոճիւն Արքեպիսկոպոս Լիպոզոր Ներկայացուցիչ, Երեւանի Թեմակալ Առաջնորդ Գեր. Պորէն Եպիս. Մուրադբէկեանի շնորհուած Հայրապետական կոնդակէն, եւ Ն. Սրբազնութեան ինձ հետ ունեցած խօսակցութենէն:

Ետ քարեղէպ էր Ձեր ՎԵ ՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ Լիպոզոր Ներկայացուցչին այցելութիւնը Ամերիկայի Հայոց որովհետեւ Պորէն Սրբազան անձամբ տեսաւ, թէ ի՞նչ է Ամերիկայի Հայոց Եկեղեցին եւ Առաջնորդութիւնը, թէ ի՞նչպիսի պատճառներ կամ ազդակներ յառաջ բերած էին Առաջնորդութեան պատակտումը, թէ ի՞նչ վիճակի մէջ է Հայաստանեայց Եկեղեցւոյ սակաւաթիւ պաշտօնէութիւնը, եւ թէ վերջապէս ի՞նչ է Ամերիկայի Հայ Գաղութը, իր բանակով եւ որակով, իր յարանուանական, իր ազգային եւ իր կուսակցական հատուածեալ կազմակերպութիւններով եւ հոսանքներով:

Անշուշտ, Պորէն Սրբազան, իրիւ արդիւնք խորագրենին, յստակատես, արդար եւ անաչառ քննութեան մը, պիտի ներկայացնէ Ձեր ՎԵ ՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ իր Ձեկուցումը,

Ա. — Թէ Ամերիկայի Հայոց Առաջնորդութեան շուրջ չկայ Աթոռի խնդիր, եւ հետեւաբար չկայ նաեւ «այր դարամբ Ելանէ» ի խնդիր: Որովհետեւ Ամերիկայի Առաջնորդութիւն կոչուածը, այն իմաստով եւ կազմակերպութեամբ, որ ծանօթ է Արեւելեան եւ Արեւմտեան Հայոց, իսկապէս գոյութիւն չունի Ամերիկայի Հայոց մէջ:

Իսկ ինչ որ կայ Առաջնորդութիւն անուան ներքեւ,

չառ թերի կազմակերպութիւն մըն է, որ սկիզբէն ի վեր նշաւակ եղած է կարգ մը ապիկար եկեղեցականներու շահամուտութեան, ինչպէս նաեւ կուսակցական բուռն կիրքերու եւ նկատումներու, միշտ յանգելով ոնէ էրկպառակութեան մը: Իսկ 1917էն ի վեր յառաջ եկած վիճակին տարբերութիւնը սա՛ եղաւ, որ երթալով այդ վիճակը հասաւ եւ յանգեցաւ Առաջնորդութեան երկպառակման, շնորհիւ նախորդ Առաջնորդ Արսէն Վրդ. ի կամակերպութեան:

Ուրախ ենք սակայն, որ Պորէն Սրբազանի ներկայութեամբ վերցաւ այդ ամօթալի երկպառակութիւնը, ջնջմամբ Փրավլտէնսի մէջ նիւթուած Առաջնորդութեան. Առաջնորդութիւն մը, որ արդէն չէր ծառայած այն նպատակին, որուն համար նիւթուած էր; Եւ այդ պատճառաւ իսկ կորսնցուցած էր իր թափն ու նշանակութիւնը:

Բ. — Թէ բոլորովին անհիմն է այն զրոյցը, որուն համեմատ իրրեւ թէ Ամերիկայի Հայաստանեայց Եկեղեցին բողոքականնալու վիճակին մէջ է այս կամ այն կերպով:

ՎԵ ՀԱՓԱՌ ՏԵՐ, իրողութիւնը սա՛ է, որ Բողոքականութիւնը շատո՛նց ի վեր դադարած է ճեկամուտներ ունենալէ, թէ՛ անդին՝ մեր Բնաշխարհին մէջ եւ թէ՛ ասդին՝ Ամերիկայի Հայ Գաղութին մէջ, այո՛ Ամերիկայի մէջ իսկ, որ ինքնին Բողոքական երկիր մըն է արդէն իր կրօնական ընդհանուր նկարագրով:

Բայց Ամերիկայի Հայ Գաղութին կեանքին ու կենցաղին մէջ եղածը սա՛ է. Հայ Բողոքականք համեմատաբար աւելի ուշադիր են իրենց եկեղեցական գործերուն են անոնց Գարդիշներն ու պաշտօնեաները առհասարակ լաւ պատրաստուած մարդիկ են: Գարձեալ՝ անոնք, հետեւելով Ամերիկեան Եկեղեցիներու, ընկերային կեանքը հետաքրքրող ժողովներ, հաւաքոյթներ, հանդէսներ, դրօսանքներ, եւ այլն կը սարքեն իրենց Եկեղեցիներուն մէջ եւ Եկեղեցիներուն շուրջ, եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ հարազատներէն ոմանք կ'երթան այդպիսի ժողովներու եւ հաւաքոյթներու, մերթ մղուած հետաքրքրութենէ, մերթ խնամիական եւ ազգականական առնչութեանց պատշաճութեամբ Լրբեմն ընկերական եւ բարեկամական յարաբերութեանց բերմունքով:

Եւ այդպիսի ժողովներու մէջ խօսելու կը հրաւիրեն անուն, զիրք եւ կարողութիւն ունեցող անձեր, ստանց յարանուանական խտրութեան, խօսելու համար այլ եւ այլ նիւթերու վրայ: Ես իսկ քանիցս հրաւիրուած եմ այդպիսի ժողովներու, զանազան առիթներով, խօսելու համար պատմական, ազգային, բանասիրական, նիւթերու եւ խնդիրներու վրայ:

Գարձեալ՝ այս երկրին մէջ զուտ ազգային կազմակերպութիւններ կան, զոր օրինակ, ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱ-

ԲԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ, ՀԱՅ ԱԶ-  
ԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ, Ինչպէս նաև մեծ ու փոքր ՈՒ-  
ՍՈՒՄՆԱՍԻՐԱՑՆԵՐ, քաղաքացիական այլևայլ Մար-  
միներ եւ կազմակերպութիւններ, որոնց մէջ Հայ Ժո-  
ղովրդեան ներկայացուցիչներ, առանց յարանուանա-  
կան խտրութեան կը զործակցին. իրողութիւն մը, որ  
կը ծառայէ զօրացնելու ժողովրդեան մէջ աղքատի կա-  
պերը եւ Հայութեան այլազան հատուածները իրարու  
մօտեցնելու: Եւ կա՛ն մեր մէջ մարդիկ, որոնցմէ ոմանք  
անգիտօրէն, ոմանք շարամտօրէն վտանդներ կ'երևա-  
կայն այս յարաբերութիւններու եւ բարեկամութիւն-  
ներու մէջ, եւ Երբեմն այնքան աւելորդ եւ անօգուտ  
կերպով կ'արտայայտեն իրենց սնտոսի նախանձախնդ-  
րութիւնը, որ նոյն իսկ արատ եւ ամօթ կը բերեն Հա-  
յաստանեայց Եկեղեցոյ եւ անոր հարադատ եւ հայրի-  
նասէր զաւակներուն կրօնական սղջմտութեան, անոնց  
բարեկրթութեան եւ կենցաղապիտութեան:

Ես երբ հասայ Ամերիկա, առաջին գանդատներէն  
մին, որ եղաւ ինձ, մեր քանի մը Եկեղեցականներու եւ  
աշխարհականներու ղէմ, սա՛ չր որ անոնք անտեղի  
կերպով, տեսակ մը խօսքի հայածանք կը մղէին ընդ-  
դէմ Հայ Բողոքականներու: Եւ այս գանդատը կ'ընէին  
խորունկ վշտով մը:

ՎԵՀԱՓԱՍԻ ՏԷՐ, Եւ աշխատած եմ դարմանել այս  
սխալ եւ վնասակար ուղղութիւնը, որովհետեւ մեր  
Աղղը պէտք ունի իր բոլոր հատուածներուն համերաշխ  
գործակցութեան: Մենք, իբրև Առաջնորդ, երկրի մէջ  
կը գործէինք եւ կը գործակցէինք Հայ-Բողոքական եւ  
Հայ-Կաթոլիկ ազգայնոց հետ: Եւ այս համագործակ-  
ցութիւնը վերջին տեսնելը շատ ուշագրաւ կերպով  
չեւտուեցաւ Կ. Պոսի Աղղային Պատրիարքարանին մէջ,  
երբ Հայ-Կաթոլիկներ եւ Հայ-Բողոքականներ սաշառ-  
նապէս քով քովի եկան Հայոց Պատրիարքին հետ գոր-  
ծակցելու Հայկական Դատին յառջողութեան համար:

Ըստ Առաքելական աստութեան, Եւ տրուպն եմ ա-  
մենայն արժանաւոր սպասաւորաց Հայաստանեայց Ե-  
կեղեցոյ: Եւ չեմ գիտեր թէ Աստուած ինչո՞ւ համար  
պահեց տրուպիս կեանքը թէ՛ Թիւրքին հայածանքէն եւ  
թէ՛ անողոք հրանդութեան մը ճիրաններէն, առաջ-  
նորդելով ինձ Անկիւրիային մինչև Ամերիկա, երբ իմ  
օժակից եւ կարգակից եղբայրներէն շատեր նահատա-  
կութեամբ պակուեցան իրենց ծառայութեան ընթաց-  
քին: Ասիկա գաղտնիք մըն է ինձ համար. եւ ես չեմ  
գիտեր այդ գաղտնիքին պատճառը. բայց ստուգապէս  
գիտեմ եւ կը խոստովանիմ, որ այս կեանքս, զոր միշտ  
կ'ընդունիմ իբրև աստուածային շնորհ, կարող չեղայ  
նուիրել այնպիսի ծառայութեան մը, որ դժհացում  
տար իմ ազգանուէր տենչանքներուն: Որովհետեւ մա-  
հու չափ կը սիրեմ Աղղս եւ Աղղիս Եկեղեցին, եւ ինչ  
որ ունիմ, — գրիչ խօսք, գործք, եւ ասոնցմէ զատ բան

մը չունիմ արդէն, — սկիզբէն ի վեր չարաչար աշխա-  
տութեամբ նուիրած եմ Աղղիս եւ Աղղիս Եկեղեցոյն,  
նոյն իսկ այս նոր Աշխարհի ամէնակուլ եւ ամէնածոյլ  
հալոցին մէջ, ուր նետուած է մեր Աղղին խոշոր մէկ  
հատուածը Մայր Հայաստանէն:

Եւ մեր Աղղին այս դաղթային ու սանդխտային  
դժբախտութեանց մէջ, Եւ որպէս Եպիսկոպոս եւ  
Միաբան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, ըստ կա-  
րելւոյն կատարած եմ իմ պարտքս եւ կը կատարեմ՝  
պահպանելու համար Հայաստանեայց Եկեղեցոյս կը-  
նիքն ու նկարագիրը եւ մեր ազգային աւանդութեանց  
նուիրականութիւնը: Բայց պէտք է խոստովանիմ, որ թէ՛  
իմ եւ թէ՛ այլոց ջանքերն ու նախանձախնդրութիւն-  
ները չեն կարող խափանել կամ արգիլել այն երեւոյթ-  
ները, որոնք կը շրջապատեն ո՛չ միայն Հայ Գաղութը,  
այլ նաև այն բոլոր այլազան, այլալեղու եւ այլացեղ  
գաղութները, որոնք սաստիկ եւ ահեղ հոսանքի պէս կը  
վազեն կու գան աշխարհի ամէն կողմէն եւ կը թափին  
Ատլանդեանի այս ափերուն վրայ, եւ կը փշրուին...:

Արդ, Ամերիկա այս գաղութը կ'ընդունի, կը տե-  
ղաւորէ միակ պայմանաւ, որ է այդ եկողներուն ԱՄԵ-  
ՐԻԿԱՆԱՑՈՒՄԸ: Եւ Ամերիկեան Կառավարութիւնը  
հրատարակէ եւ միանգամայն հանդարտ միջոցներ ու  
մեթոտներ ունի այդ եկողները ամերիկացի ընելու հա-  
մար: Ամերիկա իր իրաւունքին մէջ է անշուշտ, եւ նա  
իր իրաւունքը կը գործադրէ հօր, կանոնաւոր եւ հետ-  
դհետէ կատարելագործուող կազմակերպութեամբ մը:

ԱՄԵՐԻԿԱՆԱՑՄԱՆ հիմնական սկզբունքներն են.  
ամէնէն յառաջ անգլիերէն լեզուին ուսուցումը, ամե-  
րիկեան քաղաքացիութիւն, եւ ասոնց հետեւանքով,  
ամերիկեան մտքի, ամերիկեան գաղափարներու իւրա-  
ցում, մշակում, մէկ խօսքով ԱՄԵՐԻԿԱՅԻ ԸՂԻԱՄ ԵՐՈՒ-  
ՅՈՒԹ, հոգիով, լեզուով եւ կենցաղով:

Ամերիկա ինչպէս իր բնիկ քաղաքացիներուն,  
նոյնպէս եւ իր եկամտաւորներուն կրօնական կամ եկե-  
ղեցական դաւանանքին եւ գործերուն չդպչիր: Ինչպէս  
ամէն ժողովուրդ, նոյնպէս իւրաքանչիւր անհատ ա-  
ղատ է իր եկեղեցոյն եւ իր կրօնական համոզումներուն  
մէջ:

Բայց կա՛յ ուշագրաւ երեւոյթ մը. եւ այն ալ սա՛  
չ որ — ինչպէս յառաջագոյն ալ կանխեցի դիտել տալ —  
այս երկրին կրօնական ընդհանուր նկարագիրը Բողո-  
քական է. այսինքն ԱԶԱՏԱԿԱՆ, իրողութիւն մը, որ  
ամէն օր կը շեշտուի Եկեղեցիներու եւ կրօնական բը-  
նոյթ ունեցող ժողովներու եւ խնդիրներու վրայ: Եւ  
այս երեւոյթը ուշագրաւ է նաև այն տեսակէտով, որ  
Հոռմէական Կաթոլիկ Եկեղեցին, որ թէ՛ իր ժողովրդը-  
կան թիւով եւ թէ՛ իր հօր կազմակերպութեամբ, հիմ-  
նուած ամերիկեան մեթոտներու վրայ, կը գլխ կ'անց-  
նի բողոքական ամէնէն ընդարձակ եկեղեցիները միան-

զամայն, չէ՛ կրցած ԿԱՌՈՒԻԿ նկարագիր մը տալ այս երկրին:

Արդ, խնդիրը սա՛ է. ի՞նչ պիտի ըլլայ կամ պէտք է ըլլայ Հայաստանեայց Եկեղեցւոյն վիճակը այս բողոքական կամ ազատական Ամերիկայի մէջ:

Ես, ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ, իմ պանդխտութեան այս վեցամեայ ընթացքին, առիթ ունեցայ, և մա՛նաւանդ պարտք համարեցի ինձ՝ անձամբ չեւազրբորուիլ և ուսումնասիրել թէ՛ մեր Հայ Գաղութին վիճակը գրեթէ բոլոր Միացեալ Նահանգաց մէջ, իր դրաղմանց, իր ընտանեկան, իր կրօնական և իր ամերիկանացման կողմերէն, և թէ՛ բուն Ամերիկայի եկեղեցական և կրթական կեանքը, և հասայ այնպիսի եզրակացութեանց, որոնք պէտք է, որ առարկայ ըլլան պաշտօնապէս Հայաստանեայց Եկեղեցւոյս Հոգևոր Վերին Իշխանութեան խնամոտ ուշադրութեան և հոգածութեան:

Այս բոլոր խնդիրներու վրայ ևս անձամբ խօսեցայ Ձեր ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ Լիազօր Ներկայացուցիչ Գեր. Պորէն Սրբազանի, և խնդրեցի նոյն իսկ, որ երկարէ իր այցելութեան միջոցը այս երկրին մէջ, որպէս զի կարող ըլլայ անձամբ ուսումնասիրել թէ՛ Ամերիկեան միջավայրը և թէ՛ Հայ Գաղութին վիճակը գոնէ գլխաւոր կեղծոններու մէջ, և նուիրէ հարկ եղած ժամանակը մեր ժողովրդեան և մեր Եկեղեցւոյն հետ կապ ունեցող այս կենսական խնդիրներուն մօտէն ծանօթանալու, որպէս զի երբ վերադառնայ Մայր Աթոռ, Ձեր Ս. ՕԾՈՒԹԵԱՆ կարող ըլլայ ներկայացնել իր փորձառութեանց դրական արդիւնքը: Դժբախտաբար Պորէն Սրբազան չուտով մեկնեցաւ Ամերիկայէն, անդամանելի պակաս մը թողլով իր առաքելութեան մէջ, և առաջարկեց ինձ, որ ևս կատարեմ այդ աշխատութիւնը, և պատրաստեմ Տեղեկագիր մը մատուցուելու համար Ձեր ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ. և ևս խոստացայ կատարել այդ աշխատութիւնը:

Ահա այդ նպատակին ծառայելու համար է, որ կը դրեմ այս տողերը, որոնք կը յուսամ, թէ լըջօրէն առարկայ պիտի ըլլան Ձեր ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ բարձր ուշադրութեան: Եւ ևս այնպէս կը կարծեմ, որ այս Տեղեկագիրը պիտի ըլլայ նորագոյն փաստ մը իմ պարտուց դիտակցութեան, որպէս Եպիսկոպոս և Միաբան Մայր Աթոռոյ, և միանգամայն ապացոյց մը իմ պատասխանատուութեան, իրրև ուսումնասիրող մեր Աղգային և Եկեղեցական Պատմութեանց, և ակնատես ու ականջալուր Հայ ժողովրդեան գաղթային կեանքին՝ Ամերիկայի նման միջավայրի մը մէջ:

Ուրեմն, ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ, բարեհաճեցէ՛ք հայրական սիրով և Հայրապետական հոգածութեամբ ուշադրութիւն ընծայել ինձ:

Լեհաստանի, Ռումանիոյ, Հնդկաստանի Հայ Գա-

ղութներուն պատմութիւնները ցոյց կու տան, որ Հայ ժողովուրդը իր Բնաշխարհէն դուրս կարող եղած է պահել իր ազգային և հայացի ինքնուրոյն գոյութիւնն ու նկարագիրը այնչափ միայն, որչափ կրցած է պահել իր ՄԱՅՐՆԵՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ, իր ՄԱՅՐՆԵՆԻ ԼԵԶՈՒՆ և իր ԱԶԳԱՅԻՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ: Լեհաստան մասնաւորապէս ուշագրաւ է. որովհետեւ երբ Հայաստանեայց Եկեղեցին կաթոլիկացաւ հո՛ն, Լեհաստանի Հայ Գաղութը սկսաւ հալիլ արագ արագ և ձուլուիլ ընդ ժողովրդեան մէջ:

Արդ, Ամերիկայի մէջ Հայ ժողովուրդին հայացի պահպանութեան հապէս պիտի նպաստէ Հայաստանեայց Եկեղեցւոյն կազմակերպութիւնը այս երկրին մէջ պահանջուած պայմաններով: Իսկ այդ պայմաններն են.

1.- Պէտք է առանց բացառութեան բոլոր Հայ Գաղութներու մէջ հաստատել Եկեղեցի, իրեն սեփական չէնքով ու պաշտօնեաներով:

2.- Պէտք է Ամերիկայի Հայաստանեայց Եկեղեցւոյ պաշտօնեաները պատրաստել Ամերիկայի Դպրոցներուն մէջ:

Ամերիկայի մէջ Հայ Եկեղեցականը պէտք է պատրաստուի ամերիկեան կրթութեամբ և դաստիարակութեամբ, որպէս զի կարող ըլլայ մէկ կողմէն Հայաստանեայց Եկեղեցին կենդանի, հետաքրքրական և գրաւիչ ընել ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ՆՈՐԱՀԱՍ ՍԵՐՈՒՆԴԻՆ, իսկ միւս կողմէն գիտնայ Հայաստանեայց Եկեղեցին ներկայացնել Ամերիկայի բազմաթիւ եկեղեցիներու շարքին, մեր Եկեղեցւոյ դարաւոր իրաւունքին ու փառաւոր դիրքին արժանի և վայել կերպով մը:

Ամերիկահայ նոր սերունդը հազիւ թէ հայերէն կը խօսի: Նա ամերիկացի է իր գաղութներով, իր զարգացումով և իր կենցաղով: Այս սերունդը որպէս զի չը կորսուի իբրև ՀԱՅ, պէտք է որ կապուի իր Մայրենի Եկեղեցւոյն և հասկնալ զայն, և որպէս զի կարող ըլլայ հասկնալ իր Մայրենի Եկեղեցին, պէտք է որ անդիւրեմն քարոզ լսէ իր Եկեղեցւոյն մէջ:

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ, ասիկա թող զարմանալի չթուի Ձեր Ս. ՕԾՈՒԹԵԱՆ. որովհետեւ ասիկա անխուսահելի և անյետաճգելի պահանջն է Ամերիկայի Հայ Կաթոլիկ համար, բոլորովին անկախ մեր կամեցողութենէն, ինչպէս որ այս պահանջը եղած է անցելոյն մէջ և է՛ այժմ այլալեզու և այլաբարբառ Հայոց մէջ: Իր օրինակ, Արևմտեան Հայոց Եկեղեցիներուն մէջ արողը կը տրուի ԹԻՒՐԳՆԵՐԷՆ լեզուով, երբ ժողովուրդը ԹԻՒՐԳՆԵՐԷՆ է. և նոյն իսկ Ճաշու Ընթերուածներ մերթ ընդ մերթ ԹԻՒՐԳՆԵՐԷՆ կը կարդացէին: Անկիւրիոյ Հայք ԹԻՒՐԳՆԵՐԷՆ էին, և ևս ըստիպուած էի ԹԻՒՐԳՆԵՐԷՆ քարոզել հոն: ԱՐԱՐՅԵՐԷՆ, ԲԻՆԵՐԷՆ խօսող Հայոց մէջ նոյն լեզուներով կը քա-

րողէին: Նոյնպէս Արևելիան Հայոց մէջ, եթէ չեմ սը-  
խալիր, ՎՐԱՅՆԵՐԷՆ և նոյն իսկ ՌՌՒՍԵՐԷՆ քարոզ խո-  
սելու հարկը զգալի եղած է:

Ասիկա երևոյթ մըն է, որ ուղղակի կը ծագի մի-  
ջազայրի պայմաններէն, և այդ պայմաններ շատ ա-  
ւելի հզօր են Ամերիկայի Հայոց գաղթային կեանքին  
մէջ. և հետեւաբար, կարելի չէ որ մեր Ազգային և  
Հոգեւոր Վերին Իշխանութիւնք անհոգ և զժկամակ  
կենան այդ երևոյթին հանդէպ:

3.- Պէտք է Հայաստանեայց Եկեղեցւոյն Ժամա-  
կարգութիւնը և Միասկատարութիւնը ՊԱՇՏՕՆԱՊԷՍ  
յարմարցնել Ամերիկայի Հայոց Հոգևոր և տնտեսա-  
կան կեանքի պայմաններուն, ՊԱՇՏՕՆԱՊԷՍ կ'ըսեմ,  
որովհետև արդէն ԱՆՊԱՇՏՕՆ կերպով այս երկրին  
մէջ Հայաստանեայց Եկեղեցւոյն Ժամկարգութիւնը,  
Միասկատարութիւնը և արարողական կարգուսարքը,  
Տօնախմբութիւնները, այսպէս կամ այնպէս, բաց ի  
ՀԱՐԿԷ յարմարցուած են տեղական պայմաններուն և  
պահանջներուն:

Քանի մը զլիաւոր պիծեր մասնաւորապէս կը նշա-  
նակեմ, դադարաբար մը տալու համար իրաց վիճակին  
վրայ:

Ա.- Ամերիկայի մէջ Հայաստանեայց Եկեղեցւոյ  
Ժամկարգութիւնը ո՛չ ամէն տեղ կը կատարուի, ո՛չ  
ալ կը կատարուի ըստ կարգաւորութեան Նախնեաց:  
Առ հասարակ Կիրակի տոտուններ միայն Ժամկարգու-  
թիւն կ'ըլլայ և Ս. Պատարագ կը մատուցուի այն տե-  
ղեր միայն, ուր մեր ժողովուրդը իրեն սեփական Ե-  
կեղեցւոյ շէնք ունի. իսկ ուր որ սեփական շէնք չկայ,  
կիսօրէն կուրք կը մատուցուի Ս. Պատարագ՝ Եպիսկո-  
պոսականաց Եկեղեցիներուն մէջ կամ պարզ Ժամկար-  
գութիւն մը կատարուի, այն ալ կրճատ ձևով, և ո՛չ  
ամէն Կիրակի կանոնաւորապէս:

Իսկ Հայ Գաղութիւն խոշոր մեծամասնութիւնը  
միշտ դուրի է Հոգևոր միութարութեան. որովհետև  
ո՛չ միայն շատ ցրուած է Հայ ժողովուրդը, նոյն իսկ  
միեւնոյն քաղաքի մը մէջ, այլ նաև որովհետև Եկե-  
ղեցի չկայ, Եկեղեցական չկայ պէտք եղած թիւով.  
կամ ուրիշ խօսքով չկայ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ:

Բ.- Պսակներ կը կատարուին առհասարակ Սրահ-  
ներու կամ Տուներու մէջ. հաղուարդ է, որ կատար-  
ուին Եկեղեցիներու մէջ: ՄԱՇՏՈՑԻ Կանոնը շատ երկար  
է. որովհետև մեր Երանաշնորհ Նախնիք Ս. Պատարա-  
ցի կցած են Պսակի Օրհնութիւնը, և հետեւաբար ան-  
արմար միջավայրի պայմաններուն, այնպէս որ իւ-  
րաքանչիւր Եկեղեցական Պաշտօնեայ իր խելքով կը  
ըրճատէ, կ'ամփոփէ զայն և կը յարմարցնէ այդ պայ-  
մաններուն և պարսպաններուն:

Միեւնոյն վիճակը ՄԿՐՏՈՒԹԵԱՆՑ, ԹԱԶՄԱՆՑ  
տոթիւ: Այնպէս որ մէկ ծայրէն միւսը անկարգութիւն

մը կը տիրէ Ամերիկայի Հայաստանեայց Եկեղեցւոյ  
մէջ: Եւ այս անկարգութիւնը հետզհետէ ծանր կը ճըն-  
չէ Մեր Եկեղեցւոյն վրայ և կը վտանգէ անոր կեն-  
դանութիւնը:

Գ.- Ամերիկայի Հայ Գաղութը ստիպուած է իր  
Մայրենի Եկեղեցւոյն Տօներէն զրկուիլ. քանի որ իր  
տնտեսական կեանքը կապուած է այս երկրի տնտեսա-  
կան կեանքին և պայմաններուն. և հետեւաբար ստիպ-  
ուած է Ամերիկեան Աղղային Տօնի բռնել և իր տօնի  
օրերուն ալ, երբ Կիրակիի շէն հանդիպիր ատոնք, եր-  
թալ իր դործին կամ գործարանին:

Երբ Յունուար Եր Կիրակիի կամ դոնէ Եարաթ օր-  
ուան չհանդիպի, ահազին անսպասելութիւն մը յառաջ  
կու դայ: Ամերիկայի Հայք կը հարկադրուին տօն չը  
բռնել: Եւ այս պատճառաւ առհասարակ Յունուար Եր  
մերձաւորագոյն Կիրակիին կ'ստիպուին տօնել Փրկչին  
Ծնունդն ու Աստուածայայտնութիւնը:

Դ.- Նոր Տոմարի չընդունուիլը Հայաստանեայց Ե-  
կեղեցւոյ կողմէն, շատ աւելի կը դժուարացնէ Ամերի-  
կայի Հայոց Եկեղեցւոյն Տօնախմբութիւնները: Տոմա-  
րական այս տարբերութիւնը մասնաւորապէս նեղ և  
նոյն իսկ ծիծաղելի կացութեան մը կը մատնէ զԱմե-  
րիկայի Հայերը: Վասնզի, ինչպէս յայտնի է, Դեկ-  
տեմբեր 25ին Ամերիկա, բոլոր Եւրոպայի հետ, կը տօ-  
նէ ԾնՈՒՆԴԵ (Գրիսմըս): Ամբողջ երկիրը մեծ պատ-  
րաստութեամբ և խանդավառութեամբ կ'ողջունէ այդ  
տօնական օրը, և Հայք, մանաւանդ նոր սերունդը,  
ԱՄԵՐԻԿԱՆԱՅԸ, ինքնին կը տարուին այդ հոսանքէն,  
որ անդիմադրելի է:

ՁԱՏԿԻ Տօնին ալ խոտորումը, շնորհիւ ո՛չ միայն  
չին և նոր Տոմարներու 13 օրերուն տարբերութեան,  
այլ նաև շնորհիւ Չատիկ Լուսինն հաշուի տարբեր  
կերպերուն, Ամերիկայի Հայք կը դատուին և կը հե-  
ռանան այս Քրիստոնեայ և Մեծ երկրին աշխարհա-  
խումբ տօնակատարութեան:

Ըստ իմ խոնարհ կարծեաց, Հայաստանեայց Եկե-  
ղեցւոյ կողմէն մինչև հիմայ պէտք էր ընդունուած  
ըլլար ՆՈՐ ՏՈՄԱՐը, քաղաքակիրթ աշխարհի հետ: Եւ  
ասիկա, դոնէ այսուհետև, պէտք է ըլլայ անխտաճը-  
ղելի խնդիր մը մեր Եկեղեցւոյ համար:

Գիտենք սպասութեան, որ ՁԱՏԿԻ և ԾՆՈՒՆԴԻ  
տօնախմբման օրերուն հաշիւները շատ բուռն հակա-  
ոակութեանց և բանակիւններու տեղի տուած են Եկե-  
ղեցիներու միջև. այնպէս որ իւրաքանչիւր Եկեղե-  
ցի իր անհոգութիւնը շինած է այս մասին: Եւ սակայն  
զիտենք նաև, որ այդ հակաոակութիւնք և բանակը-  
ոիք յառաջ կու գային ո՛չ թէ հաշիւներու ճշդութեան  
կամ անճշդութեան, այլ այսինչ կամ այնինչ Եկեղեց-  
ւոյ կամ Աթոռին գերագահութեան և հեղինակութեան  
հաշիւներէն: Եւ որովհետև այդպիսի հաշիւներ և

խնդիրներ այլ ևս գոյութիւն չունին Եկեղեցիներու գործնական կեանքին և անոնց իրարու հետ ունեցած յարաբերութեանց մէջ, և հետևաբար ունէ վտանգ չկայ այլ ևս մեզ համար, կ'արժէ որ Հայաստանեայց Եկեղեցին ընդունի ՆՈՐ ՏՈՄԱՐԸ, և իր ԶԱՏԿԻՆ և ԾՆՈՒՆԴԻՒՆ ժամանակները ճշդելու համար ալ ընդունի Քրիստոնեայ աշխարհի տոմարական հաշիւները, ու այս կերպով ներդաշնակութիւն մը ստեղծէ Հայ Ժողովրդեան և քաղաքակիրթ աշխարհի Ժողովրդոց կրօնական-ընկերային կենաց արտայայտութիւններուն մէջ:

Եւ եթէ ասիկա դժուար կամ անհնար նկատուի առ այժմ, գոնէ դիրքին և հնարաւոր ըլլայ Ամերիկայի և Եւրոպայի Հայ Գաղութներուն համար:

4.— Պէտք է, որ Ամերիկայի Հայաստանեայց Եկեղեցոյ Հոգեւոր Կառավարութեան կամ Առաջնորդութեան համար ստեղծուի նոր դրութիւն մը ԸՆԴՄԱԶԱԿ ԻՐԱԽԱՍՈՒԹԵԱՄԻ, զոր օրինակ Կ. Պոլսի Պատրիարքութեան դրութեան պէս բան մը, որպէս զի Ամերիկահայ Ժողովուրդը կարող ըլլայ կառավարել իր Եկեղեցին համաձայն այս երկրի պահանջներուն եւ իր անմիջական կարեաց և պիտոյից:

Շատ մը խնդիրներ կան Ամերիկայի Հայ Գաղութին մէջ, որոնց լուծումը կախուած է Հոգեւոր Իշխանութենէն ուղղակի տեղւոյն վրայ. այսպէս՝ ամուսնական տեսակ տեսակ և նորօրինակ խնդիրներ, որոնք ծագում առած են ամերիկեան միջավայրի պայմաններէն. նոյնպէս եկեղեցական կարգապահութեան վերաբերեալ խնդիրներ, ուրիշ Եկեղեցիներու հետ յարաբերութեան և գործակցութեան խնդիրներ, և այլն եւ այլն: Արդ, պէտք է որ Ամերիկայի Հայաստանեայց Եկեղեցոյ Հոգեւոր Իշխանութիւնը լիազօր իրաւասութիւն ունենայ իր խնդիրները լուծելու և կարգադրելու համար դանոնք իր շրջանակին մէջ, և միշտ արթուն եւ պատրաստ գտնուելու իր Եկեղեցոյն հաստատեալ եւ անակնկալ պէտքերուն և պահանջներուն առջեւ:

5.— Կրնայ առարկուիլ, թէ աւելորդ են այս բոլորը Ամերիկայի Հայոց համար. որովհետեւ Ամերիկայի Հայ Գաղութը հաստատուն չէ, և վաղը բոլոր Հայեր կը վերադառնան կամ պարտաւոր են վերադառնալ իրենց Մայր-Հայրենիքը:

Բայց իրողութիւնը սա՛ է, որ Ամերիկա, ինչպէս բոլոր ազգերու և ժողովուրդներու, նոյնպէս մեր Հայ Ժողովուրդին համար ԾԱՀԱՏԱՏԱՆ-ԳԱՂԹԱՎԱՅՐ ՄԸ եղած է եւ պիտի ըլլայ: Ստոյգ է, որ շատ մը Հայեր պիտի վերադառնան Մայր-Հայրենիք, և սակայն չատեր եւ շատեր ալ պիտի գան յԱմերիկա: Տնտեսական երթևեկ մը պիտի սկսի, ինչպէս որ սկսած է արդէն Պատերազմի դադարումէն ի վեր, և այժմ յԱմերիկա

եկողներ աւելի շատ են քան թէ Ամերիկայէն Մայր-Հայրենիք վերադարձողներ:

Իսկ Ամերիկայի մէջ ծնող և մեծցող Հայ Սերունդը, որ կը կազմէ բուն ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ, պիտի մնայ իր այս նոր հայրենիքին մէջ:

Վերջապէս ինչ ալ ըսուի թեր ու դէմ Ամերիկայի Հայոց ճակատադրին նկատմամբ, Հայաստանեայց Եկեղեցին պիտի պահէ իր պոյութիւնը այս երկրին մէջ, և որպէս զի այս Եկեղեցին արդարացնէ իր գոյութիւնը Ամերիկայի մէջ և Ամերիկեան Եկեղեցիներու շարքին, պէտք է որ կազմակերպուի համաձայն այս երկրի պահանջներուն եւ պայմաններուն:

Կ'արժէ նաև գիտնալ, թէ Ամերիկայի մէջ նոյն իսկ բնիկ Եկեղեցիներ, որ հրաշալի կազմակերպութիւններ են, իրենց կենդանի գոյութիւնը պահելու համար ո՛չ միայն ստիպուած են մրցիլ իրարու հետ, այլ և պարտաւորուած են իրենց գործունէութիւնը ձեւել և պատշաճեցնել Ամերիկայի գործոն, բազմադրազ և սրարշաւ կեանքին: Կ'եւնք մը, որ միօրինակ չէ եւ կը ներկայացնէ հզօր և կանոնաւոր կազմակերպութեան հարկ ամէն վայրկեան:

Ամերիկեան իւրաքանչիւր Եկեղեցի ունի իր ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԸ, և այդ դպրոցներու մէջ է, որ կը կերտուի և կը պատրաստուի Եկեղեցոյն ապագայ Ժողովուրդը: Կրօնական դաստիարակութիւնն ու կըրթութիւնը այդ Կիրակնօրեայ Դպրոցներէն կը տրուի մատաղ սերունդին. որովհետեւ Ամերիկայի մէջ դպրոցներ պետական են և կրօնքի դատեր չեն աւանդեր հոն:

Դարձեալ, Ամերիկեան Եկեղեցիներ կը թախանցեն խորապէս ընկերային խաւերու մէջ, և կրնայ ըսուիլ որ իւրաքանչիւր Եկեղեցոյն Ժողովուրդը, մեծ թէ պղտիկ, այր թէ կին, զինուորագրուած են իրենց եկեղեցիներուն ծառայութեանց, այնպէս որ ամէն ոք միշտ գործ մը, ծառայութիւն մը ունի կատարելիք իր եկեղեցոյն հաշուին, ասանմինն կամ հաւաքաբար:

Ամերիկայի Հայաստանեայց Եկեղեցին ահա՛ այսպիսի միջավայրի մը մէջ է, և որպէս զի այս Եկեղեցին ապրի և իրեն արժանի դիրքը բռնէ Ամերիկեան Եկեղեցիներու ջոզ, հարկ անհրաժեշտ է, որ կազմակերպուի այս միջավայրին մեթոտներով, ապա թէ ոչ դատապարտուած է ինքնահիւժման և մահուան, պատրաստելով նաև Հայ Գաղութին այլասեռման և օտարացման կտրուկ ճամբան:

Պէտք է դիտել տամ նաև, որ ունէ յապաղում այս բոլոր խնդիրներու պաշտօնապէս նկատառութեան, ուսումնասիրութեան և կարգադրութեան մէջ, կը նշանակէ փութացնել Ամերիկայի Հայաստանեայց Եկեղեցոյն ինքնահիւժումն ու մահը:

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ, շատ դարմանալի և միանգամայն

ցաւալի է, որ մինչև ցարդ պաշտօնական ուշադրութիւն չէ հրաւիրուած այս միջավայրի պահանջներուն եւ պայմաններուն վրայ, որոնք անխուսափելի կերպով կը շրջապատեն Հայ Գաղութը, անոր կեանքին եւ գոյութեան բոլոր կողմերէն:

Եւ որովհետեւ Ամերիկայի Հայ Գաղութը, իր այս անխնամ եւ լքեալ վիճակին մէջ իսկ օգնութեան ամէնէն մեծ աղբիւրը եղաւ ինչպէս իր Մայր-Հայրենեաց տագնապի շրջաններուն, նոյնպէս այսօր, անոր վերաշինութեան շրջանին սկիզբը:

Եւ որովհետեւ Ամերիկայի Հայ Գաղութը, ըստ իմ խոնարհ կարծեաց, ասպաղային ալ սիրտի ըլլայ եւ մանաւանդ պէտք է ըլլայ զօրաւոր ազդակ մը Մայր Հայաստանի վերաշինութեան եւ զարգացման սեւական գործին մէջ:

Եւ որովհետեւ Ամերիկայի Հայ Գաղութը պիտի կրնայ պահպանել իր հայացի գոյութիւնը Ամերիկայի մէջ՝ շնորհիւ իր ՄԱՅՐԵՆԻ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ,

Հայաստանեայց Եկեղեցոյս Հոգևոր Վերին Իշխանութեան պարտքն է նկատի առնել այս բոլոր խնդիրները եւ փափաքելի կերպով լուծել եւ կարգադրել զանոնք, եւ առաջին առիթով տալ Ամերիկայի Հայոց Եկեղեցոյն Վարչական այն յիշգոր իրաւասութիւնը, որպէս զի այն կարող ըլլայ կազմակերպութեան գործին ձեռնարկել համաձայն միջավայրի պահանջներուն եւ պայմաններուն:

**ՎԵՀԱՓԱՌ ՏԵՐ,**

Այս տեղեկագրութիւնը խոնարհաբար կը մատուցանեմ Ձեր Ս. ՕՄՈՒԹԵԱՆ, եւ կը խնդրեմ, որ հայրական համբերութեամբ եւ գորովանօք, եւ Հայրապետական հոգածութեամբ ուսումնասիրէք զայն, յօգուտ եւ ի շինութիւն Հայաստանեայց Եկեղեցոյն եւ ի սարձանս Ձեր ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, որ ժամանակակից եղաւ մեր Աղային կեանքի ամէնէն նշանաւոր դէպքերուն, եւ ցանկալի է որ Ձեր ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊՏՈՒԹԵԱՆ փառքն ըլլայ Հայաստանեայց Եկեղեցոյն Բարեկարգութիւնը՝ Հայաստանի Այլատուութեան, Անկախութեան եւ վերաշինութեան այս Դարադլխին զուգընթաց. եւ այդ Բարեկարգութեան առաջին քայլը գործնէ կ'անուրի Ամերիկայի Հայաստանեայց Եկեղեցոյն կազմակերպութեան անյետաձգելի եւ ստիպողական գործին մէջ:

Որդիական ամէնախոնարհ ակնածանօք

Մնամ անձնուէր սպասուոր Հայաստանեայց Եկեղեցոյս:

Առաջնորդական Տեղապահ Հայոց Ամերիկայի

**ԲԱՐԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ**

ԴԻՒԱՆ,  
ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԱՐԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԻՒԼ 290  
Սեպտ. 1. 1921 ամի  
Ե Ս. Էջմիածին

Ամերիկայի Հայոց Թեմակալ Առաջնորդ  
Դերապատի Տ. Տիրայր Եպիսկոպոսին:

Ամերիկայի Հայոց Առաջնորդական Տեղապահ Դեր. Տ. Բարգէն Եպիսկոպոսը անցեալ տարուայ Հոկտեմբեր 8 քուակիր ուղարկել էր Նորին Սրբութեան վեհափառ Հայրապետին մի ընդարձակ տեղեկագիր, միտումանակ մատուցելով նորա մէջ Հայ Եկեղեցու վիճակը Ամերիկայում. նորա կազմակերպման եւ զարգացման միջոցները, որոնցով կարելի լինէր Ամերիկայի նման ըստ ամենայնի գարգացած երկրում պահպանել Հայ Եկեղեցու գոյութիւնը եւ նորա միջոցով այնտեղ գտնուող բազմաազգար Հայ ժողովուրդը կապել մեր Եկեղեցու. Հայրենիքի եւ Հայրենի Աւանդութեանց հետ անկարուստ եւ անաղարտ:

Այդ տեղեկագիրը հասաւ Նորին Սրբութեան միայն անցեալ Օգոստոս 9-ին. որ նկատուածէն եւ առանձին ուշադրութեան արժանեցնելով Նորին վեհափառութեան կողմից բարեհաճ հրահանգելով Դերապետին Դերապետութեան, ստանալ Տ. Բարգէն Եպիսկոպոսից այդ տեղեկագրի Պատհենը եւ կարդալուց յետոյ, հրաւիրել Տ. Բարգէն Եպիսկոպոսին. Ամերիկայում զրտնուող ձեռնհաս եւ կարող վարդապետներին. Քահանաներին ինչպէս եւ հմուտ եկեղեցագէտ եւ հոգեւոր կեանքով հետաքրքրուող աշխարհականներին եւ Ձեր նախագահութեամբ բնեցնելով այդ Տեղեկագիրը, նորա նման յոյս տրուած բարեփոխման անհրաժեշտ եւ յոյժ կարեւոր կէտերով. արդիւնք մասնակցող ժողովականների ստորագրութեամբ վաւերացնելով ուղարկել ի տեւ եւ ի վերջնական տնօրէնութիւն Ն. Դեր. Ս. Օժուրեան:

Դերապետ ԿՈՐԻԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ